

ՊՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ «ԼՈՒՍԻՆ» ՊՈՆԵՆՈ

Լ. Ս. ԱՐՋՈՒՄԱՆՅԱՆ

Պ. Սևակի պատանեկան տարիների պոետական մտածողության հետաքրքրական դրսևորումներից է «Լուսին» պոեմը՝ մտահղացմամբ, կատարման ձևերի զանազանությամբ, մտքի ու երևակայության լայն թռիչքներով:

Պոեմը գրվել է 1942 թ. Երևանում: Թվագրված է՝ 25.03: Առաջին անգամ տպագրվել է «Մուտք» ժողովածուում, բանաստեղծի մահից հետո՝ 1985-ին: Ծանոթագրության մեջ ասված է. «Լուսին» պոեմի երկրորդ մասն է, հինգ գլուխ՝ Ե-Թ, 28 թերթ, գրված զույգ էջի վրա, շուրջ 1500 չափատող»¹:

Ուրեմն՝ հազիվ թե պոեմը ստեղծված լինի մեկ օրում, հավանաբար բանաստեղծը վերջում նշել է ավարտի ամսաթիվը: Եվ՝ մի՞թե նա սկսել է երկրորդ մասից. իսկ եթե գրվել են նաև Ա-Դ մասերը, ավելի քան պարզ է, որ Սևակը այդ գործի վրա աշխատել է երկար ժամանակ:

Ամեն դեպքում, «Լուսին» պոեմը կանխագծում էր գորեղ տաղանդի ոչ միայն մուտքը, այլև ուղին, քանզի այն արժանիքներն ու ստեղծագործական առանձնահատկությունները, նաև այն թերությունները, որոնք բնորոշ դարձան Սևակի հասուն շրջանի պոեմներին, այս կամ այն չափով իրենց արտահայտությունն են գտել նաև այս գործում: Իհարկե, տարբեր են որակները և մասշտաբները, բայց մի հայտնի որոշակիությամբ խառնվածքի նույնությունը տեսանելի է, որքան էլ գրական կենսագրության բոլորովին տարբեր շրջանների մասին է խոսքը:

Հինգերորդ գլխի մուտքից, որը փաստորեն պոեմի տպագրված հատվածի սկիզբն է, Սևակն ընտրել է խորհրդանշական սիմվոլ-կերպարներ, որոնց հետ վարում է յուրովի բանավեճ-գրույց՝ ժամանակի, բանաստեղծի քաղաքացիական հավատամքի, մարդ-պատերազմ հարաբերության շուրջ: Կերպարները երբեմն վերաճում են տեսիլքների, հեղինակի երևակայությամբ սավառնում իրականի ու պատկերայինի ոլորտներում, բնութագրվում մերթ սուր, մերթ դաժան հատկանիշներով: Այդ բնութագրումները առնչվում են մոլեգնող պատերազմի, նրա հակամարդկային էության դիպուկ գնահատականների հետ՝ պոետական մթնոլորտը դարձնելով լարված ու դինամիկ: Սիմվոլ-կերպարներն են բուն՝ «սարսափի արքան», «հիմար կրկուն» և «երկնային անտակ լուսինը»:

Բանաստեղծի դիմում-հարցումները, արված կարճատու չափատողերով և ուղղված այդ խորհրդանշան - կերպարներին, ընդմիջվում են հեռավոր մարտի դաշտում ընկած սիրելի ընկերոջ կերպարի գեղարվեստական իմաստավորմամբ՝ իբրև հզոր կամքի ու ոգու խտացում: Ընդգծված հակադրությունը հաստատում է երկու աշխարհավերաբերմունք. մեկը՝ «սարսափի, ահի... հույսեր կործանող, ոճիրներ ցանող», մյուսը՝ գիտակցված մահի փիլիսոփայությամբ իր հողը պաշտպանող, «ընդդեմ գողի, ընդդեմ ոսոխի, ընդդեմ թշնամու» աննահանջ մարտնչող զինվորի անկոտրում հավատի ու մաքառման խորհուրդ: Սևակը իր հայացքը առավելապես քննում է թեմայի քաղաքացիական

¹ Պ. Սևակ, «Մուտք», Եր., 1985 թ., էջ 232: Այսուհետ այս ժողովածուից մեջբերումների հղումները շարադրանքում, միայն էջը:

բարոյական կողմին, քանզի «հնոցում, բոցում կոփված» իր սերնդին վայել այլ ընտրություն չի տեսնում.

Երբ երկրագունդն է սարսափում
Որոտից թնդանոթների,
Երբ ահեղ մի ահասարսուռ,
Երբ հսկա մի վտանգ,
Իր թաթի մատներով
Կախվել է մեր տան,
Ընտանիքների,
Մեր երկրի վրա՝
Որպես սուկալի մի կատաստրոֆ... (135)

Այստեղ Սևակը գտնում է, թե ինքը՝ պոետը, լավ է հասկանում այդ ամենը, որովհետև իր սերունդը փոթորիկների ու «աշխարհասասան մրրիկների գավակն» է և «ծննդյան երկունքից» է զգացել ու ապրել ժամանակի ու աշխարհի «իրարանցումը խու»:

Մի զարմանալի ներքնատեսությամբ (իրատեսությամբ նաև) նա խորքից գնում ու հայտնաբերում է օրերի գերխնդիրը, փորձում պարզել բանաստեղծի ու ժամանակի հարաբերությունը: Պոեմի զարգացման ընթացքը թեթելով զըլխավորապես դեպի հեղինակի քաղաքացիական-գեղագիտական դիրքերի հրստակեցումը՝ Սևակը դա պայմանավորում է օրերի հրամայականի կշռությով. «Ամեն ինչ այսօր ռազմաճակատին»: Նա իրեն «եթերածին» պոետ չի համարում. ճիշտ է՝ դեռ չի տեսել ռազմաճակատ, ձեռքին չունի հրացան, սակայն մարդ է բանական և իր «կայծակնածին խոհերով» քաջատեղյակ է պատերազմական օրերի պարտադրանքին.

-«Ամեն ինչ այսօր ռազմաճակատին»-
Ե՛վ սիրտ, և՛ տանջանք,
Ե՛վ սեր, և՛ տենջանք,
Բազուկներ հսկա,
Երազներ ոսկյա,
Գիտություն ու միտք,
Հղացման գաղտնիք,-
Ամեն ինչ այսօր ռազմաճակատին...
Սննդի կաթիլ,
Ոսկի, ակաթի,
Պղինձ ու դրամ
Գրամ առ գրամ,
Կաթիլ առ կաթիլ՝
ռազմաճակատին... (136)

Չմոռանա՞նք, որ պոեմում Սևակն իր գրույց-մենախոսությունը վարում է կովում ընկած ընկերոջ հետ՝ հաճախակի դիմելով նրան, վկայակոչելով նրա կենդանի ներկայությունը: Իսկ այդ «ներկայությունը» զգաստ է պահում բանաստեղծի դավանանքը, մարդկային ու բարոյական նկարագիրը ձևում կյանքի շարժման ու հասարակական առաջընթացի ուղղությամբ.

Ես մարդ եմ ծնվել իմ մաքուր մորից,
Մարդ եմ ծառանգել իմ գեղջուկ հորից
.....

Պոետ եմ ծնվել միայն քեզ համար,
Ռազմի ընկե՛ր... (137)

Իմ մեջ վեհերոտ աստվածը հատուկ
Սերմեր չի տնկել,
Ոչ էլ հոգու մեջ անանձնապատկան
Աստղեր են ընկել:
Որ ես տարբերվեմ խստիվ
քեզանից...(138)

.....
Կարևորն այն է, պոետը լինի
Ոգելից գինի...(139)

Առարկայականից վերանալով՝ նա թափանցում է ոգեղենի սահմանները՝ պոետին հատկացնելով ասպետի դեր, որ կարող է անթուր, անգրախ, աննժույգ երգի բոցով հոգիներ վառել:

Պ. Սևակը «ոգելից գինու» հետ պոետի զուգահեռը գծում է համեմատական գրեթե նման չափումներով և պահպանում է պատկերների գունավորման բարձր պայթուր:

Կարևորն այն է, պոետը լինի
Ոգելից գինի,
Ու կարողանա ոգևորության
գործությամբ բեկել:

Անգամ ծիածան կամարը երկնի...
Ոգևորության քուրայի բոցով
Քրծել իմանա
Սառնության հսկա աղյուսը ամուր...
Ոգևորության անմարմին քամուն
Հանձնել իմանա բյուր հոգիների
Թևերն առանձին,
Որ խանդավառված նրանց խելառ ձին
Որպես խոլ սամուս
Վերև խոյանա,
Աստղերը խանձի
Խանդավառության բոցը
Ե՛վ կիզուն,
Ե՛վ խոլ,
Ե՛վ անախ...(139)

Գրական առաջին փորձերից Սևակը ասես պատրաստ է եղել հռչակելու բանաստեղծական ծրագրեր, առաջադրելու պատգամ-խորհուրդներ, որոնց հիմքում ընկած էր արդիականության կենսազգացողությունը: «Լուսին» պոեմի առանցքային կետերը հենց այդպիսի դիրքորոշմամբ են առանձնանում՝ հագեցած ռազմաճակատային օրերի բովանդակությամբ: Հասկանալով կովի բովում իր հերոս ընկերների, «քաջասիրտ քույրերի», ծեր ու ջահել «բազմաբյուր սրտերի» հայրենանվեր առաքելության վսեմ իմաստը, Սևակը նրանց արարքը կշռում է «երկրագնդի և ողջ աշխարհի» նժարներով, համոզված, որ նրանք ոչ միայն սեփական եզերքի փրկության համար են կովում, այլև առհասարակ «բըռնության, կարիքի, հարստահարման» դեմ: Եվ Ազատության կրակը բորբոքում պահելու համար իրենց արյունը նվիրաբերող մարդկանց փառաբանումը Սևակը դիտում է որպես ժամանակի հրամայական:

Ձեր փառքը կերգեն,
Կերգեն գործը ձեր,
Կերգեն ձեր վերքը,
Կովի փորձը ձեր,
Ձեր հերոսության գովքը կերգեն ես,

**Ձեր արիության գործերը պես-պես...
Կերզես կյանքը ձեր,
Ձեր մահը ապա,
Ձեր մահը խիզախ և հերոսաբար...(141)**

Հավատարիմ իր պոետական խառնվածքին՝ Սևակը կանգ չի առնում գեղարվեստական հայտնությունների հանգրվաններում, այլ մեկ ա.գամ հայտնաբերածը լրացնում է նորանոր գույներով ու իմաստային տարբերակներով: Այսպես՝ ընդհանրական գովքի հատվածը քիչ անց նա մասնավորեցնում է՝ «ձերը» կոնկրետացնելով «քեզ»-ի մեջ՝ անձնավորելով յուրաքանչյուր նահատակի փառքն ու արարքը.

**...Փառք, հազար փառք քեզ, իմ անվախ ընկեր,
Քե՛զ, որ անթաղ ես մնացել դաշտում,
Քե՛զ, որ դառնագույն վշտով ես ընկել,
Որ էլ չես լինի մարտական վաշտում,
Քե՛զ, որ ճգմել է թրթուրը տանկի,
Քե՛զ, որ ռումբը հեռու է նետել,
Քե՛զ, որ ընկել ես առանց տանջանքի,
Քե՛զ, որ դավադիր ոտխն է գետնել,
Քե՛զ, որ այրվել ես օդում թռչելիս,
Քեզ, որ սեփական կյանքից ավելի
Սիրել ես կրքով եզերքը քո լուրթ,-
Քե՛զ փա՛ռք ու պատիվ, Քե՛զ՝
անմահ խորհուրդ...(142)**

Վերստին դառնալով «անառակ լուսնին», որի աչքերում «կարդում է անհոգություն» մարդու հանդեպ, Սևակը առաջադրում է մի հավատամք՝ բարու հաղթանակի ու գարնան գալուստի: Պոեմի Ջ գլուխը թանձրացում է այդ հավատամքի՝ մարդուն ուղեկցող ծանրածանր աղետների գեղարվեստական պատկերմամբ:

Է գլխի մուտքում բանաստեղծի դիմումը բուռն ու կկվին սուկ պայմանական խորհուրդ ունի. նրանք ռազմի օրերին կարող են «լոռությամբ գուգել» իրենց, իսկ մարդու համար՝

**Այսօր ոչ մի լոռություն...
Այդ հավասար է այսօր
Գործել ոճիր ահագին
Հայրենի հողի հանդեպ,
Պառավ մոր, փոքրիկ գավակի
Ու պատվի հանդեպ...(148)**

Ապա ներքին-հոգեկան վերլուծումներով Սևակը կրկին անցնում է պոեմի գլխավոր շերտին՝ «գրույցը» տեղափոխելով մենախոսության ելակետային դիրքերը և, ընկերոջը դիմելով, քննում մարդ-պատերազմ հանգույցը: Բավական երկար տարածքում լոռության թեման բացվում է և՛ քաղաքական, և՛ բարոյական, և՛ փիլիսոփայական խորքերով: Առաջնային է դառնում այն գաղափարը, թե օրհասական վրիպում կլինի «լուել քարի պես», երբ հանուր աշխարհին մարտահրավեր է նետել «մոլի ու վայրագ գերմանացին»: Չարմանք են հարուցում երիտասարդ բանաստեղծի բնութագրումները, մտածողության լայնահուն սահմանները, արտահայտչաձևերի բազմազանությունը, ընդհանրացումների ուժը: Բանական և հակաբանական երկու ծայրաբևեռ աշխարհըմբռնումների պայքար է տեսնում Սևակը Մեծ հայրենականի գոյամարտում՝ ընդհանրացնելով դրանք բարու ու չարի խորհրդանշական պատկերներում և կյանքի ու մահվան հավիտենական բախման իմաստում: Երիտասարդ Սևակի մարդերգու-

թյունը չի կաղապարված, այլ ստեղծված է կենդանի ապրումներից ու զգացումներից, պայմանավորված ժողովուրդների ողբերգությամբ ու կորուստներով: Իսկ չարի դեմ նրա ըմբոստացումն ուղղված է այդ տարիներին աշխարհում կուտակված «եղեռն ու ոճրի» դեմ, նրանց դեմ, ովքեր կյանքը դարձրել են սպանդ, «փոել կորուստ ու մահ»:

Պոեմի վերջին Ը և Թ գրուխներում դարձյալ Սևակը ներկայացնում է իր սիմվոլ պատկերները՝ լուսին, բու, կկու, յուրաքանչյուրին իր «որակով» և ահեղ մարտերի ու առաջին հաղթանակի (Դոնի Ռոստովի ազատագրման) պարագծերով լավատեսական շերտեր հաղորդում պոեմին: Միշտ է, այս հատվածներում բանաստեղծը երկարաբան է, տեղ-տեղ կրկնում է իրեն, ձգում ասելիքը նույն մտքերի կուտակումներով, սակայն դրա փոխաբեան ի հայտ է բերում տան ու տողի կառուցվածքային ձևերի անկաշկանդ ու վարժ տիրապետում, փոխակերպումների բազմազանություն:

«Լուսին» պոեմը հեղինակի առաջին լուրջ հայտն էր պոեմի ժանրային որոնումներում:

Л. С. АРЗУМАНЯН - Поэма Паруйра Севака "Лусин" ("Луна"). - В статье дан анализ юношеской поэмы Севака "Лусин". Написана поэма в 1942 г. в Ереване. Датирована 25-ым марта. Впервые была опубликована в сборнике "Мутк" после смерти поэта - в 1985 г.

В этой ранней пробе пера уже видны черты большого таланта, более того, поэма в какой-то степени предопределяет дальнейший путь Паруйра Севака, так как поэтические особенности, присущие зрелому творчеству Севака, намечены уже в этой юношеской вещи.

Это произведение — первая серьезная заявка Севака в жанре поэмы.